


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուկարիոյ համար
Տարեկան Թրք 10
Վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան Թրանք 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Կը հրահարակոյի ճարար օրերը : Ծա-
նուցման տողը 10 Սանդիմ : Երկու քիւ ա-
ռայ հրահարակուած քերքը 40 Սանդիմ :
Զհրահարակուած գրութիւնը եւ յսրուիր :

Հասցէ
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNNA

ԱԶԳԱՅԻՆ

ՏԵՂԻՈՅՍ ԱՂԲԱՏԱԽԱՄԸ

Ինչպէս յայտնի է, Օրիորդ Ֆրայդը-
րի մեկնելէն ետքը տեղւոյս Աղբատախնա-
մին կողմէ կարօտ աղգայնոց հաց կը բաշ-
խուէր. սոյն բաշխումը տեւած է 45 օր եւ
նպաստաւորուած են 141 ընտանիք, այսինքն
535 անձինք. բաշխուած է 7594 քիւլ հաց,
որուն փոխարէն վճարուած է 1325 ֆրանք:
Սոյն գումարը՝ տեղւոյս Հայ ապաստանելոց
կեդրոնական Զանձնաժողովոյ Ատենապետ
Տեար Կարապետ Յովաստիանի նախաձեռ-
նութեամբը հանգանակուած է :

Ուրախութեամբ կը տեղեկանանք թէ
երկու պատուաւոր աղգայնոց մէջ վերջերս
պատահած դէպքի մը կարգադրութեանն առ-
թիւ տեղւոյս Աղբատախնամ ընկերութեան
վճարուած է 200 ֆրանք ոսկեգրամ :

(Թէ Լոնտրայէն Աղբ. ընկերութեան 50 անգ-
ղիական ոսկի շրկուած է. այժմ կը տեղե-
կանանք որ շրկուածը ոչ թէ 50 այլ 100
անգղիական ոսկի է եւ տեղախան Ապաստա-
նելոց Կեդր. Զանձնաժողովոյն յանձնուած է,
որ միմիայն Պոլիս վերադառնալ ուղղով
և Աղբատախնամի կողմէ վկայեալ կարօտ աղ-
գայնոց ճամբու ծախքը պիտի հոգայ, եւ
արդէն անցեալ կիրակի 10 չքաւոր գաղ-
թականներ շրկած է ի Պոլիս :

Աղբատախնամ ընկերութիւնը կը խընդ-
րէ մեզմէ ծանուցանել թէ Տեար Մ. Մի-
սակեան, նորահաստատ նպարավաճառ ի թաշ
Եօլ, թիւ 1512, յանձն առած է ընկե-
րութեան վճարել մէկ ու կէս առ հարիւր
իր իւրաքանչիւր ամսոյ ընկելից բոլոր առե-
տրական գործառնութեանց վրայ :

Ընտնք որ կ'ուզեն անուղղակի կերպով
եւս նպաստել Աղբատախնամին, պարտին բա-
ջալերել վերոյիշեալ հայ նպարավաճառը, որ
իր ապրանաց լաւութեանը կը միացնէ նաեւ
գոհացուցիչ աժանութիւն :

Անցեալ թուով ի լրոյ ծանուցած էինք

կրօն . Ժողովոյ Օգոստոս 5ի նիստին
մէջ տուած որոշումներէն մին է հետեւեալը :

«Նախականտեան Տ Գէորգ Վարդապետ,
որ մի քանի ամիսէ ի վեր Պուլկարիա կը
գտնուի, խնդրած է որ իրեն ո՛ր է պաշ-
տօն յանձնուի այդ կողմերը : Ժողովը պատ-
շաճ չի դատեց այս մասին ո՛ր է տնօրէ-
նութիւն մը ընել :

Բիւզանդիոն

Խմբագրութեանս ուղղուած մէկ քանի
նամակներ կը տրտնջան կարգ մը մայրերու
դէմ, որոնք իրենց լալկան երախաները հե-
տերնին եկեղեցի բերելուն՝ անոնց ընդա-
ներուն և սուր ճիչերուն ձայնէն կը խա-
գարուին թէ եկեղեցական արարողութիւնը
և թէ հաւատացելոց աղօթքը : Այդ կարգի
մայրերը, որոնք քաջ համոզուած են թէ ի-
րենք ալ չեն կրնար հանգիստ սրտով աղօթել
անոնց արձակած ճիչերէն ու շատ անգամ
մեղք ալ կը մտնեն զանոնք անհիմնով, ուս-
տի եկեղեցի բերելու չեն . և կամ, ձայներ-
նին հանել չի տալու միջոցը գտնելու են :

Թերեւս առարկողներ գտնուին թէ տա-
նը մէջ մէկը չունին որ երախան անոր ձը-
ղեն ու այս պատճառաւ միթէ եկեղեցի եր-
թալու չե՞ն . ատանկները թող խիճերնուն
հարցնեն թէ պէտք է որ եկեղեցւոյ արա-
րողութիւնը խափանուի եւ հաւատացելոց
աղօթքը խանգարուի իրենց մէկ երախային
պատճառաւ :

ՁԵԿՈՅՑ

Ա. Պ. Մ. Կ. Վառնա, — «Հայելիի
բաժանորդ ըլլալ կ'ուզէք սա պայմանաւ որ
շահեկանութենէ զուրկ զրկած մէկ յօդուած-
նիդ հրատարակենք : Շէն կ'իմար . ձեր այդ
անճոռնի առաջարկը կը մերժենք, եթէ մին-
չեւ իսկ շահեկան ըլլար յօդուածնիդ :

ԱՆԿԱՊ ԽՈՇԵՐ

Ջանա որ չըլլա՞ն կիրքերուդ մոլին,
Չափով գործածէ կինը և օղին .
Վա՛յ կարգա գլխուն շատկէկ խշմղին,
— Զը փըրթի՛ խուլբը . . . անկըճիգ օղին :

*
* *

Անձրեւը զուարթ ու անուշ քերթուա-
ծը չէ՞ աղի արցունքին : Առաջինը երկինքի
ճերմակ բնակիչներուն ձօնն է բարերար, իսկ
միւսը վարի անթեւ ու հիններուն զէ՛նքը՝ պատ-
րո՞ղ ու թիւնալից :

*
* *

Մեր տգոհ ծնունդէն մինչեւ բարերար
մահը՝ չորս տեղ ունինք այցելելիք : Որրան,
Գլորոց, Հրապարակ ու Գերեզման : Առաջ-
նոյն մէջ ծիծ կայ, երկրորդին մէջ ծեծ,
միւսին մէջ հե՛ծ, իսկ վերջինին մէջ ցե՛ց . . . :

*
* *

Համբոյրը Տարիսնքի Պատմութեան է՛ն
վսեմ սկզբնաւորութիւնն է : Մինակ այդ է-
ջը, այդ նախաբանն ահա մի՛ պատուէք, ո՞վ
ժե՛օն—ժա՛ններ, երբ ուսման ամբողջ ա-
ւարտած էք ալ : Ատոր մէջ պիտի տեսնաք
թէ ձեր սիրտը անցեալին մէջ ժամացոյցի մը
պէս ինտո՞ր գիտցաւ բանիլ, երբ գող շըր-
թունքնիդ իրենց սարսուռը պտըտցունել ու-
ղեցին թաւշային այտերու վրայ . . . :

օ*օ

Սիրոյ մէջ մի՛ ուղեր մուրացկան ըլլալ :
Կրնաս արգահատեցնել ի գուր շարժել դի-
մացինդ, բայց երբէք դէպ ի սէր : Որովհե-
տեւ սէր ըսուած անանուն բանը իբր ողոր-
մութիւն չէ որ կուտան, այլ իբր գաւկի-
ւալ մը՝ բաշտած սիրտէ մը ուրիշ սիրտ :
Բան չունին նէ թող հատուցանեն փոխա-
դարձաբար : Գումարը հատնելիք չունի : Ե-
րանի՛ այն սիրտերուն որոնք զոյգ կը սնան-
կանան :

”””

Արշալի ցուրտ բան, Աստուած իմ . . :
Արդէն ապրելէ զապրած, մեռած բոյս մը
— ծխախոտը — պլլել թուղթի մը մէջ որ
յանուն Աղբային լիւանդանոցի պատրաս-
տուած ըլլայ : Պատանքի մտածումը չը պիտի
ունենայինք ու գերեզմանական ցրտութիւն
մը չը զգայինք պիտի, երբ այդ թուղթով
սիկալոնէս խմել սկսեինք, Նիկալոնէս զոր
իկել ընելու համար շինած էինք . . . :

””

Ախաշխարհի բնակիչներուն մէջ չի տե-
սայ մէկը որ ֆանթիւնի պէս մարտիրոսացած
ըլլար : Թշուառութիւնը իրենցմէ քիչերը նե-
տած էր մարդկային այդ կոյուղիները : Ի ծնէ
կրաւորական էակներ մանքնալ, որոնք ետքն
ալ ուզեր են չեղոր սիրտ մը ունենալ, է-
ականք սրտնց հոգին օր մը օրանց չէ բռնկած
սուրբ հուրով . . . : Հանրակին ու Օմնիպիւս :
Տարբերութիւն կը տեսնա՞ք դուք աս եր-
կուքին մէջ . . . ընենա՞ն :

Տ. Օ.

ՄԵՍԻԱՅԻ ԳԱՆՈՒՍՏԸ

Այս շարժում «կազմէ Էթրանթէյի մէջ
հրատարակուած հետեւեալ լուրը մեծ մտա-
հոգութիւն պատճառներ է հրէից բաբունաց
և րաբունապետաց :

«Ամերիկայի մէջ գտնուող արդի գար-
գացեալ հրեա սերունդը իր բաբունապետ-
ներուն սա հարցապնդումը ուղղած է. քանի
որ ըստ Թալմուտի, Մեսիան հինգ հազար
տարի վերջը պիտի գար աշխարհ և կանգնէր
հրէից թագաւորութիւնը, ու հիմա հրէից
թուականը 5657 ըլլալով տակաւին չէ ե-
րեւած, և քանի որ այսչափ քրիստոնեայ
ազգեր և մահմետականք կը հաւատան թէ
Մեսիա եկած է, պէտք է ուրեմն Մովսի-
սական օրինագիրքն ու մարգարէից թուղթի-
րը հաւատարմաբար որոնելով՝ նոյն ճշմար-
տութիւնը հրեայ ազգին ալ պաշտօնապէս
բնացնել :»

Մենք ալ այս մասին հետեւեալ հե-
ռագիրներն ստացած ենք :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

Աժմուս Բոժոժիկ եւ Բնկ.

Պաղեստին

Մեսիայի աշխարհք եկած ըլլալուն վը-
րայ Ամերիկայի հրէից յարուցած խնդրոյն
ստիւլ հոս գտնուող հրեայք իրար անցան :
Մօշոնալիներէ ոմանք տակաւին 43 տա-
րի կ'ուզէ Մեսիայի գալստեան, կըսեն :

Պալաթ, Թալմուտ մինարէ

Այսօր գումարուած Խաֆաֆալիներուն
ժողովը միաձայն հաւանութեամբ որոշեց
դէպի երկիրը աղերսագիր մը տալ, որպէս
զի Մեսիան շուտ աշխարհք գալով խախա-
ները ներկայ գտնարին կացութենէն աղատէ :

Բիրիբաշա

Աղերսագիրը ժամանակին իր տեղը (եր-
կիր) հասցնելու նպատակաւ կանգնելի Բա-
բելոնեան նոր աշտարակին ծախուցը մաս-
նակցելու համար ստորագրութիւն մը բաց-
ուեցաւ սարտէլաճի Գիսիսպի տոմարին մէջ :

Լօնճա

Մարմարայէն եկած մասնաւոր հեռա-
գրի մը վրայ լաբէրտաճի Խախաֆալները ո-
րոշեցին մարդակեր քօրիկներէն այս տարի
լաբէրտա չի շինել. ասոր վրայ մեծ բանա-
կալներ տեղի ունեցան Միրգատային խօլ-
թուխը և գարկա — պիւքէնի ու թիւյ — իո-
խի տեսակէն բաւական օղի սպառեցաւ :

Պալաթ

Որոշուեցաւ աշտարակը բարձրացնել
Պալատու ծովափերի խուճուխին վրայ :
Բոժ . — Անշուշտ կը բռնէ :





ՀԱՐՍԱՆԵԿԱՆ

ՃԱԽԱ

Ի վառնա հաստատուած Պոլսեցի գիւրակեցիկ դասուն պատկանող երիտասարդի մը ու օրիորդի մը նշանախօսութիւնը կը կատարուի ասկէց երկու ամիս առաջ, ի ներկայութեան երկու կողման ազգականաց և բարեկամաց։ Տեղացի անուանի խանութպաններէն մին, որ այն միջոցին ներկայ կը գտնուի, ինքնաբերաբար կը յայտարարէ թէ կնքահայրը ինք պիտի ըլլայ թէև ազգականաց ու բարեկամաց մէջ այդ պաշտօնը կատարելու փափագողներ կան եղեր, բայց վերոյիշեալ անձին առաջարկը մերժելը անբաղաճարութիւն համարուելով՝ չնորհալուծեամբ ընդունուեր է։

Վարդավառի դիմացի շաբթուն հարսանեաց հանդէսը պիտի կատարուէր. ուստի օր առաջ, ըստ սովորութեան, պատգամաւորութիւն մը կնքահայր աղային տունը երթալով զայն հանդերձ ընդունեօք հարսնիքի կը հրաւիրէ։

Որոշեալ գիշերը հարսնիքը կը սկսի։

(Պէտք է գիտնալ որ, ըստ տեղական սովորութեան, կնքահայր եղողը՝ հարսնիքին մօմերը, քօղքն ու ձեռնոցները կամ երկու օր առաջէն կը զրկէ և կամ հարսնիք գացած ատենը հետը կը տանի եղեր։)

Ճաշելու ժամը կը հասնի ու կնքահայր աղան տակաւին չերեւակալուն տանտէրը հանդէսին նախագահին, Տէր Հայրին կը մօտենայ։

— Տէր Հայր, աս ատեն եղաւ՝ տակաւին կնքահայր աղան չերեւակալ։

— Աստուած օրհնեցէ, պէտք եղած հրաւերը օր առաջէն ըրած էք։

— Այո՛, շաբաթ մը առաջէն... ար-

դեօք նորէն հրաւիրե՞նք։

— Աստուած անփորձ պահեսցէ, տեղւոյս սովորութիւնը սա է եղեր որ կնքահայրը երբեք ճաշէն ետքը կու գայ, ու քանի որ դուք ձեր պարտքը կատարած հրաւիրած ըլլալէ ետքը տակաւին օրթան մարդ չելաւ, ըսել է որ ճաշէն վերջը պիտի գան. հետեւաբար, ըստ իս, ճաշերնիս ընելու ենք... բայց դարձեալ դուք գիտէք։

Տէր Հայրին տւած այս բացատրութեան տակցիք գո՛հ կը մնան և ճաշերնին կրնն։

Ժամը դիշերուն 10 կը դարնէ և տակաւին կնքահայր աղան երեւան ելած չէ։ Այս անգամ վիզուքը տէր հայրէն կը սկսի, մինչեւ այն ատեն հալաւն ու նշանը օրհնած ըլլալու էր որ ժամը տասներկուքին ալ պըսսիլը ընէր եւ երթար ուրիշ հարսնիք մը՝ ուրիշ աւջի իրիկուրէն։ Ի վեր մէկ երկու անգամներ հրաւիրակներ եկած էին զինքը տանելու համար։

«Հիմա ուր են նէ կու գան... կու գան կոր... ճամբան ըլլալու են... պէլքի տունին մօտեցան, ր ըսելով՝ մինչեւ ժամը 1 ի զուր կը սպասեն. այն ատեն ընդհանուր հրաւիրանցումը կը սկսի։

— Ի՛նչ կըսէք, Տէր Հայր, լուր մը զրկե՞նք։

— Չոլլար, օրհնած. իրաւ, քիչ մը առաջ ես ալ կաճապարէի կոր, բայց մտածելով որ անոնք աղնուական են, պէտք է ըսպասել. անանկ չէ՞ մի հաճի խաթուն։

— Հա՛ ես, քա ճանըմ՝ չիյտէ՞ք քի մէնխալէ կնքահարները ինքիզինքնին ծանրէն կը քաշեն տէ ուշ կերթան հարսնիք քի էվէլ էվէլօք խը՛ղ մը ըրած ըլլան։

— Աղէկ կըսես ամա՛ քուրուկ, կէս գիշերը կանցնի կոր։

— Է՛հ, մինչեւ լուս էբէյի վախիթ ունինք։

Օրիորդ մը — Տէր պապա, արդեօք մէջերնին հիւանդութիւն մը պատահեցաւ ըսենք։

— Աստուծոյ օրհնեսցէ օնհնեալ խուզի, եթէ աստանկ բան մը եղած ըլլար՝ կիմացնէին եւ կամ կնքահայր աղաին խոստմանը համեմատ եղբայրը կու գար խաչը կը բռնէր :

— Անանկ է նէ կտոր մը տահա ըսպասենք :

— Պէլքի կնքամայր հանրմին թուալէթը ուշ մնաց :

— Հոգի, առջի իրիկունէ մինչեւ հիմա չորս հարս թուալէթլէնմիշ եղած կըլլար, ուր մնաց կնքամար մը :

— Պէլքի նոր ֆիստան կտրել տուած է տէ մօտիսթը տահա չէ բերած :

— Աճապա ինչ ըզլակ պիտի բերէ :

— Ուշանալնուն նայելով, ծանրկէք բան մը ըլլալու է : Գուն ինչ կըսես, տիկին :

— Ըզլակէն վաղ անցանք, քիթը բերանը տեղը թող գան խաչ մը բռնեն տեղերնին երթան. աս ինչ սիրտ—հատնում բան եղաւ :

Ժամը 2 կը զարնէ, դարձեալ ոչ կընքահայր, ոչ բօղք եւ ոչ մօմերը չեն երևար :

Նորէն գիմում Տէր Հայրին :

— Ինչ պիտի ընենք :

— Զեղի բան մը ըսե՞մ, օրհնած, ես պիտի երթամ անգիի հարսնիքին պսակը ընեմ գամ. մինչեւ այն ատեն հարկաւ կնքահայր աղանիս երևան կենէ :

— Զըլլար տէր պապա, չենք թողուր :

— Բայց օրհնած...

— Պարապ տեղը սիրտ մի հատցուներ տէր հայր, չենք թողուր :

— Ուրեմն շնորհքով մէկ երկու հոգի զրկելու է կնքահայրին տունը :

— Շատ աղէկ. Գէորգ աղան, որ զանոնք աղէկ կը ճանչնայ, Մկրտիչ աղային ու միւսիւ Օհանին հետ թող երթան :

Այս երեք հրաւիրակները ճամբայ կելլեն առաջնորդութեամբ Աւուգ աղբօր, որ զիրենք կնքահայր աղաին տունը կը տան :

— Մեր կնքահայր աղան ո՞ւր է :

— Պառկած է, կը քնանայ կոր կը պա-

տասխանէ դուռը բացող կինը :

— Պառկած է մի՞.

— Այո՛, բայց ինչո՞ւ կը զարմանաք :

— Որովհետեւ հարսնիքը բռնուած է.

— Թերեւս ինքն ալ կնքահայր ըլլալը մոռցած է :

— Տէր ողորմեա. բայց աստանկ բան կըլլայ տիկին :

— Ինչո՞ւ չըլլար :

— Ար խնդրենք, հաճեցէք իմացնել իրեն թէ.

— Ոհ, այդ անկարելի է :

— Եւ ինչո՞ւ.

— Վասն զի ունեցած հիւանդութիւնը զինքը սաստիկ կը նեղէ :

— Հիւանդ... բայց այդ բանը մեղի իմացնելու էիք. հարսնիքը բռնուած է.

— Ինչ օգուտ, ասոր ալ նութխը բռնուած է, չի կրնար խօսիլ :

— Զի կրնար մի խօսիլ...

— Կրնաք ստուգել, եկէք զձեզ իր սենեակը առաջնորդեմ, բսելով՝ զանոնք կը տանի կարծեցեալ հիւանդին մօտ, որ տանը մէջ եղած աղմուկէն արդէն արթնցեր էր :

— Անցած լլլայ սիրելի բարեկամս.

— Հա՛ն...

— Ինչ ունիս, ինչ կը զգաս.

— Հա՛ն... հին... հոն...

— Հէ՛, ինչ ըսիր :

— Հա՛ն... հին... հոն... հա՛ն :

— Քեզ կը կանչէ կոր, միւսիւ Օհան :

— Բայց ես չեմ ճանչնար այս աղան :

— Գոնէ եղբայրդ զրկէիր որ խաչը

բռներ :

— Հա՛ն, հին, հոն, հա՛ն :

— Գէորգ աղա, թերեւս անոր ալ լեզուն առնուած է. ուստի հանգիստ ձգելով զիրենք՝ աճապարենք մեկնիլ. կրնանք ուրիշ կընքահայր մը գտնելով գործը կարգադրել, այն ատեն աս մարդուն նութխն ալ կը բացուի լեզուն ալ :

— Ուրեմն գիշեր բարի, տիկին.


— Գիշեր լոյս բարի պարոններ :

Հրաւիրակները վազելով տուն կը վերադառնան, ուր արդէն պատրաստ էր ուրիշ կնքահայր մը, հարսնիքին մօմն ալ եկեղեցիէն բերել տալով առտուան դէմ պըսակի արարողութիւնը կը կատարուէ:

— Հիմա, սա խօսք տալէն ետքը ճայմիշ եղող կնքահայր աղային ինչ պիտի ըսես, հարցուց հարսնեւոր մը հաճի խաթունին:

— Ինչ պիտի ըսեմ, ան ալ ինծի պէս խուռու խուռույա ճախաւն կը սիրէ եղեր:

Կ'ըսեն թէ հետեւեալ առտու կանուխ, առջի գիշերուան հիւանդ կնքահայր աղան խաթունին մէջ թէղկեահին գլուխն անցած պիւպիւրի պէս կը խօսի եղեր:



ԹԱՊԼԱՔԵԱՐ ԴԵՆԵԿ ԱՂԲՕՐ
ՃԻԻՄՊԻԻՇԸ

— o —

(Շար. և վերջ տե՛ս թիւ 11)

— Ծօ ետվում, կեօղիւնտէքի ըրիր մեզի, ըսաւ Վառվառ հանրմը Լեւոնին, առտուընէ պէրի կով մը կիփեր, աս ավուճիս խտար խուզին 5 սահաթէն էփեցաւ:

— Աղետ տըսես տոյ տմա՛ ան դու ըսածդ խուզի ըլլայ նէ տըլլայ, ասիտա թէցի է, ցաբուս ցեփիյ տոյ:

— Էյ նէ իսէ. քաղջիկներ, հայտե սուֆրան շտկեցէք:

— Շատ աղէկ:

— ԱՖ կընես հարցունելուս տմա՛ Դանիկ աղբար, ջրախի կը գործածես, սա մեղքըս ճիտդ ըլլայ՝ մի՛ քաշուիր:

— Ի՞նչ միւճիպով տի քաշուիմ էֆէնտըմ, ճիւմպիշին մէջ իշիի չըլլայ իսէ՛ թէլսիլ թանպուրա կու նումանի:

— Անանկ է:

— Պախուսուս, կեր, արբ եւ ուրախ լերը ճիւմպիւշի հըմար ըսաւ Սողոմոն:

— Անանկ է նէ՛ Բուրմինէ, ըրախիին թէփսին բեր, մէզէի համար էրկու հատ ալ չիրօղ ըստըկէ:

— Վարվար հանում, ագ ճիճօղ ըսածդ ի՞նչ տըլլի:

— Զոր ձուկ ըսել է:

— Մա՛յրիկ, ո՞ր մէկը պիտի ընեմ, սեղանը մի շտկեմ, չիրօղ սալաթասին մի շիւնեմ:

— Քաղջիկ, բէք պէճէրիկսիդ բան ես գուզում Սիմա հանրմ, աֆ կընես տմա՛ մէկ էրկու չիրօղ էփեր:

— Գլխուս վրայ:

— Վարվար հանում, մուշու պարոնին ըսէ ուր՝ էրթայ մեզի չէօմէք մի մածիւն առնէ բերէ:

— Քա ճանրմ, եօղուրտը ինչ պիտի ընենք. խուզի ունինք, չիրօղ ունինք, 10—12 հատ ալ խաշած հաւկիթ կոյ, կ'օգտէ:

— Բարի. դուք գիտէք:

— Ամա էյէր մէտէթ կ'ուզէ կոր՝ բերել տանք:

— Խա՛յիր իմ մէտէս չուզիր:

— Անանկ է նէ պէտքը չէ, տմա՛ կէնէ դուն գիտես, մենք մեզի ըլլայինք նէ՛ զարար չունէր կըսէի, Սիմա հանրմ տալէթ ըրած ըլլալնուս...

— Հիտտակ է, շիշման հանումին հըմար մէկ չէ՛ էրկու չէօմէկ մածիւն թող ֆէտա ըլնի:

Պ. Լեւոն գնաց մածուն առնելու:

Հինգ վայրկեանէն սեղանը պատրաստուեցաւ, Սիմա հանրմն ալ օղին ափսէն ներս բերաւ:

— Աղջիկներ դուք ալ եկէք նստեցէք :
Գուրմինէ՛, խուզին բեր սեղանը դիր :

Այս հրամանները կատարուելէ ետքը,
— Հրամմէ Դանիկ աղբար, ըսաւ Վառվառ
հանրմը, օգիին 3 գաւաթները լեցնելով,
որոնց մին Դանիկ աղբար, մին Սիմա հանրմին
տուաւ ու վերջինն ալ ինք առաւ :

— Վալ, շնորհակալ եմ, ես ըրաւի
չեմ վերցնել, ըսաւ Սիմա հանրմ :

— Ես ալ քեզի պէս եմ ամա՛սս ալ
ասանկ բան մըն է լիզուդ կը թրջես :

Եւ երեք գաւաթները թրինգէ ըրին :

— Էհ, Աստուած շատ տարիներու հաս-
ցնէ, շնորհակալ ենք Դանիկ աղբար, քի մեզ
չի կորեցիր :

Հաղիւ թէ գաւաթները երկրորդ ան-
գամ լեցուեր էր, ահա «հայր օլսուն» ըսե-
լով տանաէրը կը վերադառնար, հետն ալ
տիւրկէր մը՝ զոր բերել էր տանիսը աչքէ ան-
ցունել տալու համար :

Վառվառ հանրմ պարտաւորուած էր
կէս—բերան «պոլսուրուն» մը ըսելու :

Տանտէրը — Գըմէթ իւստիւնէ կէլ-
միշիլ ըսելով սեղանին զլուխն անցաւ :

Ընթերցողը կրնայ երեւակայել Դանիկ
աղբար զգացած պաշտան—էնմէ տրտմութեան
աստիճանը. իր շիշման հանրմին հետ սեղա-
նին վրայ գինիի գաւաթներով ընելիք ճիւղ-
պիւշին ծրագիրը ջուրը ինկած էր. ու ըրած
այնչափ ծախսը վրայ տուած ըլլալուն համար
վշտացած, անձայն ճաշելէն ետքը մեկնեցաւ,
ինքնիրեն ըսելով — Բապիւմ աշխատեցանք և
հալոյում կալանք : —

Ա.Զ.Դ

100 Այցաբարտը երկու ֆրանքի կը
տպագրուին : Դիմել «Հայկի» խմբագրու-
թեան : Քաղաքներէ ըլլալիք յանձնարարու-
թեան թղթատարին ծախք 30 սանդիւմ յանձ-

նարարողին վրայ է : Դրամի փոխարէն Պուլ-
կարական 5, 10 եւ 15 սանդիւմնոց նամա-
կադրօշմ կը նդունուի :

Լուծուած կցերի գրերու

ՎԻԹ — ԿԱՐԱՊ — ԱԳՌԱԻ — ԿՐԻԱՅ

Սոյն չորս գրերէն կալմուած կենդանիի
անունն է ՎԱԳՐ :

Վառնայէն՝ Տեար Թորոս Թորամանեան :
Ռուսճուգէն՝ Ստեփան Եազմաճեան :

ՀԱՆԵԼՈՒԿ

Թիւ 21

Տանեհհինգ տարի թագաւոր եղաւ,
Տանեհվեցին հիւանդացաւ,
Երեսունին ինկաւ մեռաւ,
Յետոյ նորէն կենդանացաւ :

— 0 —

Թիւ 20 հանելուկն էր Բաղասամու էշը :
Լուծեց Տեար Ռուբէն Համբարձումեան

Դարձեալ Սիլիսդրէէն Տեար Կարապետ
Ակաբի կ'առաջարկէ հետեւեալը, զոր Ա. Լու-
ծողին նուէրն է «Մանր Զուարճալիք» անուն
գրքոյկ մը :

ԿՑԵԼԻ ԳԻՐԵՐ

Հետեւեալ չորս բառից ամէն մէկին գի-
րեր կցել, որով պիտի կազմուին չորս նոր բա-
ռեր և ըլլան բաջածանօթ առակ մը. աւել-
ցուած գիրերէն պիտի կազմուին մի մակբայ,
մի գործի փայտակերտ և մի կրծող անասնիկ :

ՀՈՒՐ — ԴՐԱՄ — ԿԱՄ — ԵՏ



Հ Ա Յ Պ Օ Ն — Մ Ա Ր Շ Է

Վարնա, Բ. թաղ, Աստուծոյ փողոց մօտիս
«Գամբիա» կարգը.

ՄԱՐՏԻԿ Տ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Քաջալերուելով այն գնահատելի վստահութենէն՝ զոր Պատ. հասարակութիւնը չի զըլացաւ մեր նորահաստատ կոչիկի մեծ վաճառատան՝ այս անգամ ալ բացած ենք «նոր պօն» մարշէլը՝ յորում անմիջեւի աժանութեամբ կը վաճառենք երախայից մկրտութեան հագուստներ, գլխարկներ, բազմատեսակ տանձեղաններ, ժապաւէններ, պոստըրիներ, անթըրտօններ, գօրսէներ, քաշ—գօրսէներ, գուլպա, թաշկինակ, ձեռնոց, ֆանէլա, շապիկներ, (երկու սեռի), վէնոց, թենոց, փողկապ, արդուզարդի վերաբերեալ հոտաւէտ նիւթեր, փուտրա, հայելի, հովանոց, հովահար, զըլխու ֆանթազի սանտրեր, փորթ—մօնէններ, ձեռագործի վերաբերեալ ամէն տեսակ բաներ, (խոզա, տերեւ. հունտ, բուլ, թրթըր, մետաքս, բուրդ եւայլն.) ձեռքի չանթաներ, կողով, գոլան, կերպաս թաւիչ եւայլն : Գաղթական արհեստաւորներու այս Ա. ձեռնարկները քաջալերելու համար՝ կը խնդրուի ազգայիններէ չանտեսել մեր նոր Պօնմարշէն :

—o—

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ՆՈՐ ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

Կ Ա Մ

ՀԱՒԱՔԱԾՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԳ. ԵՐԳԵՐՈՒ
ՄԱՍՆ Ա.

ԳԻՆ 2 ՅՐԱՆՔ

—o—

Սոյն երգարանը որուն անհամբեր կ'սպասուէր ժամանակէ մ'ի վեր, 216 էջերով, մեծ խնամքով սրբագրուած, բաց ի հին ընտիր երգերէ կը պարունակէ նաեւ բազմաթիւ նոր երգեր :

Փափաքողք պէտք է դիմեն առ Մ. ԽԱՉԻԿԵԱՆ՝ Արեւելեան տպարան, Զրդ. Ուչասթ թիւ 110 1/2 ՎԱՌՆԱ.

Վառնայէ դուրս և օտար երկիրներէ պահանջութեանը իւրաքանչիւրին վրայ պէտք է աւելցնել 20 օտն. թիմ իբր բօթայի ծախք :

ԿԱԼՎԱՆԻ ՅՍԹ

ՕՆՆԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Ամեն տեսակ տպարգական կաղապարներ պատրաստող, նաեւ թէ անձնական և թէ՛ առևտրական կնիքներ : Գիմել ի Վարնա Չիլիկիրէր փողոց թիւ 561 :

Գին գոհացուցիչ :

—o—

ՄԵՔԵՆԱԹԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ

(ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ և Բ. Է. ԲԱՆՁՈՒԳ

Վառնա Զրդ. թաղ Ելտըղ Թապիա

Ամեն տեսակ մեքենաներու. շինութիւն և նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով և թէ՛ պարզ ջուրով գործող մեքենաներ, նաեւ շոգեմակոյկներ. ջաղացքի վերաբերեալ ամէն տեսակ երկաթեայ գործիքներ, գրամական. գասաներ, շէնքերու յատուկ երկաթեղէններ, տեսակ տեսակ ջրհաններ եւայլն եւայլն կը պատրաստուին : Պատ. Յաճախորդք միշտ գոհ մնացած են սոյն գործարանի շինութիւններէն :

—o—

Այցեւորում, հասցէւորում. նամակագրութիւն, հրաւիրատում, բարենիշ, տոմարակ, եւայլն եւայլն թէ՛ պարզ և թէ՛ ոսկեզօծեալ սէկ քանի գոյներով կը տըպագրուին : Քաղաքներէ եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին : Գին գոհացուցիչ : Գիմել հայելի խրմբագրութեան :

Отговорень редакторъ : Н. Драгулевъ
ПЕЧАТНИЦА „ВЗАИМНОСТЬ“ — ВАРНА.